Մարզպետ Գաբիել Գյոզալյանի շնորհավորանքը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

Հարգելի բուժաշխատողներ, շնորհավորում եմ ձեզ բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Բժիշկները եզակի մասնագետներից են, ովքեր գործունեությունից առաջ երդվում են՝ պարտավորվելով բուժելուց զատ գթասրտությամբ վերաբերվել հիվանդին, չմոռանալ, որ գործ ունեն նրա կյանքի ու ամենաթանկ արժեքի՝ առողջության հետ: Կոչումով բժշկին բոլոր ժամանակներում էլ բնորոշ է եղել անկեղծ կարեկցանքը, ինքնազոհողությունը, սրտացավությունը, պատասխանատվության բարձր զգացումը, հիվանդի ցավը խորապես վերապրելով՝ նրան մասնագիտական բարձր պատրաստվածությամբ ապաքինելը:

Շնորհավորում եմ մեր երկրի բոլոր բուժաշխատողներին, բոլոր նրանց, ովքեր իրենց անձնվեր աշխատանքով ապահովում են մեր հասարակության առողջությունը: Ցանկանում եմ բոլորիդ մասնագիտական ձեռքբերումներ, անձնական երջանկություն, առողջություն: